Մրցույթի հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

դասախոսի թափուր տեղերի համալրման համար

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ»-ի հետևյալ թափուր աշխատատեղերի համար՝

1. «Վեբ կայքերի (հավելվածների) մշակում» մասնագիտական մոդուլի դասախոս՝ 408 ժամ ծանրաբեռնվածությամբ,
2. «Մոբայլ տեխնոլոգիաների կիրառում» մասնագիտական մոդուլի դասախոս՝ 272 ժամ ծանրաբեռնվածությամբ:

Մասնագիտական մոդուլների դասախոսի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջները.

Դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում: Թեկնածուն պետք է համապատասխանի նաև «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներին:

Մրցույթը անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են **մինչև 2026 թվականի սեպտեմբերի 23-ը ներառյալ**, յուրաքանչյուր օր՝ ժամը 10:00-ից մինչև 16:00-ն, բացառությամբ շաբաթ և կիրակի օրերի:

Մրցույթը կանցկացվի **2026 թվականի սեպտեմբերի 28-ին, ժամը 11:00-ին**, ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում՝ հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Մամիկոնյանց փողոց 52:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (011) 20-96-01 հեռախոսահամարով: